# 123

1. Ինչո՞ւ ես, իմ ընկեր, տխուր այդպես,
Քայլում ես գլուխդ խոնարհած,
Աչքերդ կոպերիդ տակ ծածկում ես,
Միշտ հայացքդ գետին է հառած:

2. Ամեն երեկո կամ կեսգիշերին
Հաճախ ես ծնկի վրա դու լինում,
Միշտ Աստծուն ես կանչում դու սրտագին,
Դառն արցունք է աչքերիցդ հոսում:

3. Աստված (2), բարեսիրտ Արարիչ,
Այս ժամին Քո առջև եմ կանգնած,
Աղերսում եմ ես Քեզ, իմ Տեր Փրկիչ,
Լսիր աղոթքս լացակումած:

4. Դու տեսնում ես՝ ինչպես եմ ես ապրում
Հարազատից, ընկերից հեռու,
Թե մեղանչում եմ որևէ բանում,
Ինձ ներող, մեղքից մաքրողն ես Դու:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025